Առնիկա ՀԿ

Համայնքային Համախմբման և Աջակցության Կենտրոն ՀԿ

ԷկոԼուր տեղեկատվական ՀԿ

# Թումանյանի տարածաշրջանի բնակչության ֆիզիկական և հոգեկան առողջության վերաբերյալ ուսումնասիրություն

Ալավերդի
2021

Սույն զեկույցը պատրաստվել և հրապարակվել է «Թումանյանի տարածաշրջանում աղտոտվածության վերաբերյալ իրազեկման մակարդակի բարձրացում» ծրագրի շրջանակներում՝ չեխական «Առնիկա» կազմակերպության կողմից՝ հայաստանյան «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» և «ԷկոԼուր» հասարակական կազմակերպությունների հետ համատեղ՝ Չեխիայի Հանրապետության Արտաքին գործերի նախարարության ֆինանսական աջակցությամբ՝ Վերափոխումների խթանման ծրագրի շրջանակներում:

# Բովանդակություն


| | |
|---|---|
| 1. Առաջաբան | 3 |
| 2. Մեթոդաբանություն, հարցման նպատակ | 4 |
| 3. Հարցման բնութագիր | 4 - 5 |
| 4. Արդյունքներ և քննարկում | 5 - 9 |
| 5. Եզրակացություն | 9 |
| 6. Առաջարկություններ | 10 -13 |

# Առաջաբան

Այս ուսումնասիրությունն անհրաժեշտ էր իրականացնել՝ գնահատելու համար Թումանյանի տարածաշրջանի բնակիչների ֆիզիկական և հոգեկան առողջության վիճակը: Երկար տարիներ Թումանյանի տարածաշրջանը գտնվում է լեռնահանքարդյունաբերական գործունեության ազդեցության տակ, և դա նշանակալիորեն ազդել է տարածաշրջանի բնակչության թե՛ ֆիզիկական , և թե՛ բարոյահոգեբանական վիճակի վրա:
Բնակիչների մի մասը առողջական խնդիրների հետևանքով հանգում են սոցիալական խնդիրների, օրինակ՝ աշխատունակ քաղաքացիների թվի կրճատում, զբաղվածության սահմանափակ հնարավորություններ: Տարածաշրջանի բնակիչները շարունակաբար դժգոհում են աղտոտումից շրջակա միջավայրին ու իրենց առողջությանը հասցված վնասներից և բացասական ազդեցություններից, սակայն այդ բողոքները հիմնականում մնում են անորոշ և դրանց որևէ լուծում չի տրվում:
Այդ պատճառով չեխական քիմիական անվտագության Առնիկա ՀԿ-ն, հայաստանյան Համայնքային Համախմբման և Աջակցության Կենտրոն ՀԿ-ի և ԷկոԼուր տեղեկատվական ՀԿ-ի հետ համատեղ որոշեցին իրականացնել Թումանյանի տարածաշրջանի բնակչության ֆիզիկական և հոգեբանական վիճակի գնահատում և վերլուծություն՝ դրա հիման վրա կազմելով առաջարկներ՝ ուղղված հանքարդյունաբերության բացասական ազդեցության հետևանքով տուժած համայնքների բնակիչների առողջության պահպանմանը և հիվանդությունների ռիսկերի կանխարգելմանն ու հետևանքների վերացմանը:

Սույն հետազոտությունը իրականացվել է «Թումանյանի տարածաշրջանում աղտոտվածության վերաբերյալ իրազեկման մակարդակի բարձրացում» ծրագրի շրջանակներում ՝ չեխական «Առնիկա» կազմակերպության կողմից՝ հայաստանյան «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» և «ԷկոԼուր» հասարակական կազմակերպությունների հետ համատեղ՝ Չեխիայի Հանրապետության Արտաքին գործերի նախարարության ֆինանսական աջակցությամբ՝ Վերափոխումների խթանման ծրագրի շրջանակներում:

# Մեթոդաբանություն

## Հարցման նպատակը

Սույն հարցման նպատակն է բացահայտել Թումանյանի տարածաշրջանի Ալավերդի, Շնող, Ախթալա, Թեղուտ, Մեծ Այրում, Փոքր Այրում, Ճոճկան, Շամլուղ, Աքորի, Հագվի, Մղարթ, Կաճաճկուտ բնակավայրերի բնակիչների ընդհանուր ֆիզիկական, առողջական և բարոյահոգեբանական վիճակը և կարիքները: Հարցումը կատարվել է 2021 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, հիմնականում 2 բաժնով՝ առանձնացնելով ֆիզիկական առողջությունը և ֆիզիկական ընդհանուր վիճակը ու հոգեկան առողջական վիճակը, և համեմատական է տարվել հիմիկվա և երկու տարի առաջվա վիճակի միջև: Հարցմանը մասնակցել են 18-ից ցածր, 19-29, 30-45, 46-60 և 60-ից բարձր տարիքային խմբերի արական և իգական սեռի ներկայացուցիչներ:

Հաշվի է առնվել սեռերի հավասարաչափ բաշխում տարիքային խմբերի միջև:

Հարցման ընթացքում անդրադարձ է կատարվել շրջակա միջավայրի և աղտոտվածության ու առողջության վրա դրա ազդեցության մարդկանց իրազեկվածության մակարդակին:

Այս զեկույցը մատնանշում է ուսումնասիրված ոլորտում առկա հիմնական խնդիրները, որոնք կարող են օգնել բարելավել տեղի բնակչության ընթացիկ առողջապահական, բնապահպանական խնդիրների մասին գիտելիքները և ծառայել որպես հղման նյութ՝ տարածաշրջանում իրավիճակի բարելավման ծրագրի մշակման համար:

Խնդիրները հասկանալու և տեղի բնակչության կարիքներին ծանոթանալու նպատակով հարցաթերթը բաղկացած էր 23 հարցից՝ մանրամասն և ամենահարմար պատասխանի հնարավորությամբ և ընտրությամբ:

Հարցումն անցկացվել է անձամբ հարցազրուցավարների կողմից օֆֆլայն տարբերակով:

Բոլոր արդյունքներն անանուն են և կօգտագործվեն բացառապես ծրագրի նպատակների համար:

# Հարցման բնութագիր

- **Մասնակիցներ** - 59, 28 կին, 31 տղամարդ – հավասար հարաբերակցություն
- **Հարցումը իրականացվել է 12 համայնքներում** - Ալավերդի 23 մարդ (39 %), Փոքր Այրում 13 մարդ (22 %), Ախթալա 5 մարդ (9 %), Թեղուտ 4 մարդ (7 %), Ճոճկանից և Օձունից 3-ական մարդ, Մղարթից և Շնողից 2-ական մարդ, Կաճաճկուտ, Շամլուղ, Հագվի և Մեծ Այրում բնակավայրերից 1-ական մարդ:

- **Տարիքային հարաբերակցություն**

  Բաշխում 5 տարիքային խմբի, հարցվածների մեծ մասը ՝ 27 մարդ (հարցման 46 % - ը) եղել է 30-45 տարեկան:




**Հարցվածների կրթությունը**

- Հարցվածների կեսը (56%) որպես կրթության ամենաբարձր կետ նշել են միջնակարգ դպրոցը կամ քոլեջը , միջին մասնագիտական ուսումնարանը, իսկ հարցվածների 29% -ը ավարտել են բարձրագույն ուսումնական հաստատություն:
- Արական սեռի հարցվածների մեջ գերակշռում են այնպիսի տեխնիկական մասնագիտությունները, ինչպիսիք են օպերատորը, ավտոմեխանիկը, ֆերմերը: Իգական սեռի հարցվածները աշխատում են որպես ուսուցիչներ, տնտեսագետներ, լրագրողներ, բուժքույրեր: Հարցվածների մի մասը տնային տնտեսուհիներ են:
- Եկամտի աղբյուրը նշվել է ցածր (հարցվածների 56%) կամ միջին (37%) :

## Արդյունքներ և քննարկում

**Կյանքի որակի գնահատում**

Հարցվածների մեծամասնությունը (46%), ընդհանուր առմամբ կյանքի որակը գնահատել են միջին (ոչ լավ, ոչ վատ), 37%-ը կյանքի որակը լավ է համարում: Ընդհանուր առմամբ, այս հարցում գերակշռում են չեզոք և դրական պատասխանները:

## Ընդհանուր ֆիզիկական վիճակի գնահատում

Հարցվածների գրեթե կեսը (48%) իրենց ընդհանուր վիճակը գնահատում է բավարար, 25%-ը՝ միջին, իսկ 25%-ը գոհ չեն իրենց առողջական վիճակից:

Հարցվածներից շատերին ֆիզիկական կարողությունները չեն սահմանափակում:

## Առողջական վիճակի գնահատում




Ինչպես ցույց է տալիս գրաֆիկը, մեծամասնությունը (մասնակիցների 48%-ը) իրենց առողջական վիճակը գնահատել են լավ, բավարար կամ վատ: Հարցվածների միայն 13%-ն է դրական գնահատել իրենց ինքնազգացողությունը: Հարցման իգական խմբի ներկայացուցիչներից ոչ մեկը չի պատասխանել, որ նրանք գերազանց առողջություն ունեն:

## Բարոյահոգեբանական վիճակը

Հարցումների արդյունքների համաձայն՝ տեղի բնակիչների 88%-ը աշխատանք կատարելիս բարոյահոգեբանական սահմանափակումների չի հանդիպում կամ հանդիպում է, բայց հազվադեպ դեպքերում: Հարցվածների միայն 12%-ն է պատասխանել, որ իրենց հուզական վիճակը հաճախ կամ անընդհատ ազդում է աշխատանքի որակի վրա:

## Ինքնազգացողության համեմատություն 2 տարի առաջ և հիմա

Հարցվածներին տրվել է երկու տարի առաջվա վիճակի համեմատ իրենց ֆիզիկական և հոգեկան առողջական վիճակի փոփոխությունը գնահատելու հարցը:

Արդյունքները ցույց են տվել, որ վերջին 2 տարիների ընթացքում բնակիչների մեծամասնության ֆիզիկական վիճակը մնացել է անփոփոխ (36%), կամ փոքր-ինչ վատացել է (34%): Վերջին երկու տարվա ընթացքում անբարենպաստ փոփոխություններն ավելի շատ

կապված են առողջության ֆիզիկական կողմի հետ: Ֆիզիկական առողջության վիճակը վերջին 2 տարիների ընթացքում զգալիորեն վատացել է հարցվածների 14%-ի մոտ:




Հոգեկան առողջության արդյունքները որոշակի միտում ցույց չեն տվել, հարցվածների ամենամեծ թիվը (34%) պատասխանել է, որ իրենց հոգեկան առողջությունը մնացել է նույնը, ինչպիսին եղել է 2 տարի առաջ:




Հարցվածների մեծամասնությունը պատասխանել է, որ իրենց առողջական վիճակը համապատասխանում է հասակակիցների առողջական վիճակին (պատասխանների 68%-ը), 17%-ը պատասխանել է, որ իրենց առողջական վիճակը շատ ավելի վատ է, քան նույն տարիքի այլ բնակիչներինը: Ստորև բերված գրաֆիկը ցույց է տալիս պատասխանների բաշխումն ըստ մասնակիցների սեռերի.




### Ծխելու սովորություն

Հարցվածներից 15 հոգի ծխելու փորձ ունեն, որոնցից 12 արական սեռի ներկայացուցիչ ծխում է ամեն օր, իսկ 3 հոգի ժամանակ առ ժամանակ:

### Հիվանդություններ

- **<18 և ցածր** – սրտանոթային հիվանդություններ, մարսողության հետ կապված խնդիրներ
- **19-29** – սրտանոթային հիվանդոություններ, լյարդի և երիկամների խնդիրներ, արյան ճնշում, ալերգիկ դրսևորումներ
- **30-45** – շնչառական հիվանդություններ, սրտանոթային հիվանդություններ, լյարդի և երիկամների խնդիրներ, շաքարային դիաբետ, ալերգիկ դրսևորումներ
- **46-60** – սրտանոթային հիվանդություններ, երեխային զարգացման խնդիրներ
- **>60 և բարձր** – սրտանոթային հիվանդություններ, լյարդի և երիկամների խնդիրներ, ուռուցքային հիվանդություններ, շնչառական հիվանդություններ, ալերգիկ դրսևորումներ

### Պատճառներ, որոնց հետ հարցվածները կապել են իրենց հիվանդությունները

Հարցվածները հիվանդությունների զարգացումը կապել են սթրեսի, ծանր աշխատանքի, օդի վիճակի և սննդի հետ:

Բուժհաստատություններում հարցվածների 15%-ի հիվանդությունների զարգացումը կապել են շրջակա միջավայրի վիճակի հետ, սակայն ոչ մի դեպքում այդ նկատառումները բժշկական մատյաններում չի գրանցվել:

# Եզրակացություն

Իրականացված հարցումը ցույց է տալիս, որ ՀՀ Լոռու մարզի հանքարդյունաբերության ազդեցության համայքներում տարածված հիվանդությունները հատուկ են այն ռիսկի հիվանդություններին, որոնք կարող են առաջանալ շրջկա միջավայրում և մարդու օրգանիզմում ծանր մետաղների բարձր կոնցետրացիաներից։
Մտահոգիչ է հատկապես 18-ից ցածր տարիքի երեխաների կողմից նշված հիվանդությունների փունջը, այն է «սրտանոթային հիվանդություններ և մարսողության հետ կապված խնդիրներ»։
Հարցվածների շրջանում ի թիվս հիվանդությունների առաջացման հնարավոր պատճառների նշվում են նաև մի շարք այլ պատճառներ, որոնց մի մասը լայն փողկապակցվածություն ունի շրջակա միջավայրի աղտոտման հետ, ինչպիսիք են սթրեսը, սննդի որակը։ Պետք է նշել նաև, որ ըստ հարցազրուցավարների հարցվողների մի մասը ունեն ցածր  իրազեկվածություն և գիտելիքներ շրջակա միջավայրի աղտոտվածության առողջության վրա հնարավոր ռիսկերի մասին, ինչպես նաև եղել են մարդիկ, ովքեր կաշկանդված են եղել հիվանդությունների պատճառները կապել նաև բնապահպանական բաղադրիչի հետ՝ ունենալով անհատական մտավախություններ, որ դրանով կվնասեն իրենց կամ հանքարդյունաբերությանը՝ ունենալով սոցիալական կախվածություն հանքարդյունաբերական ոլորտից։
Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ մեծ անելիքներ ունեն Տեղական ինքնակառավարման մարմինները, որպեսզի մեղմեն առողջապահական ռիսկերը, իրականացնեն առողջապահական ռիսկեր պարունակող խնդիրների լուծման ուղղությամբ կանխարգելիչ և հետևանքների վերացմանն ուղղված գործունեություն տեղական մակարդակում և այդ ուղղությամբ համապատասխան պետական քաղաքականություն ներդնելու համար ներկայացնեն առկա կարիքներն ու խնդիրները ազգային մակարդակում։
Ստորև ներկայացնում ենք **Առաջարկություններ Տեղական ինքնակառավարման մարմիններին հանքարդյունաբերական ազդակիր համայնքներում և բնակավայրերում շրջակա միջավայրի առողջացման և մարդու առողջության վրա քիմիական աղտոտվածության ազդեցության մեղմացման ուղղությամբ։**

Սույն առաջարկությունների փաթեթը կազմվել է «Առնիկա» չեխական կազմակերպության, «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն», «ԷկոԼուր» տեղեկատվական և «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ների կողմից 2018-2021 թվականներին ՀՀ Լոռու մարզի Շնող, Ախթալա, Ալավերդի, Օձուն, Ստեփանավան խոշորացված համայնքների հանքարդյունաբերության, քիմիական աղտոտվածության բնակավայրերում շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա հանքարդյունաբերության ազդեցության ուսումնասիրության շրջանակներում իրականացված օրգանական և բիոլոգիական նմուշառումների փորձաքննությունների արդյունքների, համայնքի բնակիչների հետ շարունակական քննարկումների արդյունքների և 2021 թվականին ՀՀ Լոռու մարզի Ախթալա, Շնող, Ալավերդի, Օձուն խոշորացված համայնքներում իրականացված տեղաբնակների առողջական վիճակի հետազոտության արդյունքներից բխող կարիքներից ու առաջնահերթություններից։

1. Վերանայել համայնքների հնգամյա զարգացման ծրագրերը, ուժեղացնել համայնքների սոցիալական, էկոլոգիական և առողջապահական քաղաքականությունները ուղենշող բաժինները՝ համալրելով այն համայնքի սոցիալ-էկոլոգիական միջավայրը բարելավող և մարդկանց առողջական ռիսկերը կանխարգելող միջոցառումներով։
Վերանայման համար պետք է համայնքներում իրականացնել հարցումներ և ֆոկուս-խմբային քննարկումներ՝ ոլորտային փորձագետների ներգրավմամբ։

2. Խորհրդակցել առողջապահական և փորձագիտական հավատարմագրված ինստիտուտների հետ՝ մշակելու նախադպրոցական ուսումնական հաստատությունների և ազդակիր համայնքների դպրոցների համար հատուկ սննդակարգ՝ բարձրացնելու համար երեխաների օրգանիզմի դիմակայությունը ծանր մետաղների հավանական բացասական ազդեցությունները մեղմելու համար։

3. Իրականացնել մանկապարտեզամերձ և դպրոցամերձ տարածքներում, հանրային խաղահրապարակների մերձակայքում գտնվող թափոնակույտերի ունիտիլիզացում և հողի վերին շերտի փոխարինում մաքուր տարածքներից բերված սնահողով՝ իրականացնելով նրանց վրա համապատասխան կանաչեցման միջոցառումներ։

4. Ստեղծել բազմաշահագրգիռ, միջգերատեսչական աշխատանքային խմբեր՝ կազմված տեղական և պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներից, փորձագետներից և մշակել համայնքի թափոնակույտերի ունիտիլիզացման և ռեկուլտիվացման պլաններ, կազմել աշխատանքների նախահաշիվ, ներկայացնել ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն։

5. ՏԻՄ-ին կից ստեղծել բազմաշահագրգիռ աշխատանքային խումբ, որը կզբաղվի թափոնակույտերի մաքրման, պոչամբարների ռեկուլտիվացման համար ֆոնդահայթայթման աշխատանքներով տեղական և միջազգային դոնորների շրջանակներում։

6. Տեղադրել փշալարեր և «Վտանգավոր Գոտի» գրառմամբ պաստառներ համայնքի բոլոր այն տարածքներում , որտեղ առկա են թափոնակույտեր և պոչամբարներ՝ կա՛մ համայնքային բյուջեի միջոցներով, կա՛մ համագործակցելով լեռնահանքարդյունաբերական ընկերությունների հետ՝ նրանց կողմից իրականացվող ֆինանսավորմամբ:

7. Արդյունաբերական թափոնների անարդյունավետ պահպանման համար պահանջել, որպեսզի արդյունաբերական ընկերությունը կրի պատասխանատվություն և փորձագետների և բազմաշահառու աշխատանքային խմբի մասնակցությամբ նոր ծրագիր մշակի դեպի շրջակա միջավայր արտահոսքերը նվազեցնելու համար:

8. Համայնքի բնակավայրերում իրականացնել բուժկետերի և բուժհաստատությունների՝ տեխնիկական կարողությունների և հագեցվածության, շենքային պայմանների դիտարկում, կազմել անհրաժեշտ նյութերի ցանկ, համայնքային բյուջեում և արտաբյուջեում գումար սահմանել շենքային պայմանների բարելավման և ժամանակակից նյութերով համալրման համար:

9. Տեղական ինքնակառավարման մարմինների անունից դիմել ՀՀ Առողջապահության նախարարություն՝ համայնքի հանքարդյունաբերության ազդակիր բնակավայրերում իրականացնել մարդկանց առողջության գնահատում՝ առաջնայնությունը տալով երեխաների առողջության գնահատմանը:

10. Դիմել ՀՀ Կառավարություն ազդակիր համայնքների առողջապահական հաստատություններին հատուկ կարգավիճակի շնորհման համար, հագեցնել անհրաժեշտ տեխնիկական միջոցներով և մասնագետներով, ինչը թույլ կտա իրականացնել համայնքի բնակիչների առողջության խորքային հետազոտություններ՝ կոնցերոգեն ու ոչ կոնցերոգեն հիվանդությունների կանխարգելման և լիարժեք բուժման նպատակով, հզորացնել ազդակիր համայնքների մանկաբուժության ոլորտը:

11. Իրականացնել համայնքների սոցիալ-էկոլոգիական իրավիճակի գնահատում, ստացված տվյալներով մշակել համայնքների այլընտրանքային զարգացման ծրագրեր՝ հստակեցնելով համայնքի այլընտրանքային զարգացման ուղղությունները, մատնանշելով ֆինանսական միջոցների ներգրավման հստակ և հավանական աղբյուրները:

12. Առաջարկել հանքարդյունահանող ընկերություններին համայնքների նկատմամբ սոցիալ-կորպորատիվ պատասխանատվության շրջանակներում ներդրումներ իրականացնել համայնքների այլընտրանքային զարգացման ուղղությամբ, մասնավորապես զբոսաշրջության, արդի գյուղատնտեսության, կանաչ տնտեսությունների և փոքր և թեթև արդյունաբերության ոլորտներում:

13. Համայնքային բյուջեի և հասարակական կազմակերպությունների հետ համատեղ համայնքի ազդակիր բնակավայրերում իրականացնել իրազեկման դասընթացներ, սեմինարներ, հանդիպումներ, տպագրել և տարածել գրականություն համայնքների քիմիական աղտոտվածության վտանգների և այդ վտանգներից հնարավորինս խուսափելու համար, քաղաքացու կողմից անհրաժեշտ անվտանգության կանոնների պահպանման վերաբերյալ:

14. Համայնքների գյուղատնտեսական մթերքների էկոլոգիապես մաքուր արտադրության ապահովման, եվրոպական երկրներ արտահանելու և առողջապահական ռիսկերի կանխարգելման նպատակով աջակցել համայնքներում ջերմոցային տնտեսությունների զարգացմանը՝ ապահովելով ոչ աղտոտված ջրերով ոռոգման համակարգեր:

15. Ազդակիր համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցությամբ Դեբեդ գետի և նրա վտակների ոռոգման համակարգի աղտոտվածության մակարդակը իջեցնելու համար մշակել «Դեբեդ գետի և նրա

վտակների ավազանում գտնվող աղտոտման աղբյուրների և թափոնակույտերի ուտիլիզացման և կոնսերվացման» պլան՝ ֆինանսական միջոցների հայթայթման պարագայում այն քայլ առ քայլ իրականացնելու համար:

16. Մասնագիտացված հաստատությունների ներգրավմամբ մշակել համայնքներում առողջ սննդակարգի վերաբերյալ ցուցիչներ և շրջանառել համայնքի բնակիչների շրջանում:

17. Համայնքի բնակիչների համար կազմակերպել առողջ ապրելակերպի դասընթացներ:

18. Համայնքի սոցիալ-էկոլոգիական քաղաքականությունների շրջանակներում կազմակերպել համայնքների բնակիչների հետ հանրային քննարկումներ հանքարդյունահանող ընկերությունների ներկայացուցիչների մասնակցությամբ՝ քննարկելու համար նրանց ընկերությունների կողմից շրջակա միջավայրում հայտնված թափոնների կառավարման և ռեկուլտիվացման հարցերը, առաջարկելով վերջիններին կազմել և ներկայացնել համայնքներին թափոնակույտերի ռեկուկտիվացմանն ուղղված միջոցառումների պլան և ժամանակացույց:

19. Համայնքում ստեղծել մոնիտորինգային խմբեր բաղկացած ՏԻՄ, համայնքի բնակիչ և քաղաքացիական հասարակության անդամներից և իրականացնել պարբերական մշտադիտարկումներ համայնքում առկա էկոլոգիական խնդիրների, աղտոտման աղբյուրների, արդյունահանման գործընթացի վերաբերյալ: Կազմել մշտադիտարկման զեկույցներ և առկա իրավիճակը ներկայացնել հանրությանը, ՏԻՄ ֆեյսբուքյան էջերով, կայքերով, խախտումներ հայտնաբերելու դեպքում ներկայացնել դրանք համապատասխան մարմիններին:

20. Համայնքի պաշտոնական կայքերում հղում տալ չեխական «Առնիկա» , հայկական «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն», «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ների կողմից ստեղծված ինտերակտիվ օնլայն քարտեզին, որպեսզի հանրությունը տեղեկացված լինի համայքների աղտոտված կետերի, այդ կետերում առկա ծանր մետաղների կոնցետրացիաների և մարդկանց առողջության համար առկա ռիսկերի մասին:

21. Համայնքներում գնահատել հանքարդյունաբերության հետևանքով սոցիալական, բնապահպանական և առողջապահական վնասներ կրած բնակիչների վնասները, կազմել համապատասխան ակտեր, որոնք կարող են հիմք հանդիսանալ տուժած քաղաքացիների սեփական իրավունքների պաշտպանության համար տեղական, պետական մարմիններում և դատաիրավական համակարգի շրջանակներում:

22. Հանքարդյունաբերության ազդակիր համայնքների երեխաների համար կազմակերպել ամառային հանգիստ էկոլոգիապես մաքուր տարածքներում երիտասարդական ճամբարների տեսքով, որոնք կուղեկցվեն առողջ սննդակարգով և հանգիստ միջավայրում կրթական և իրազեկման ծրագրերով։

23. Համայնքի առողջական խնդիրներ ունեցող բնակիչներին (մասնավորապես չարորակ, սիրտ-անոթային և այն հիվանդությունները, որոնք կարող են ի հայտ գալ բնապահպանական ռիսկերի արդյունքում) պարբերաբար տրամադրել ուղեգրեր դեպի առողջարաններ։

24. Համայնքի բնակավայրերում պարբերաբար իրականացնել հանդիպումներ՝ համայնքի բնակիչներից շրջակա միջավայրի խնդիրներին և իրենց առողջությանը վերաբերող բողոքներ ու գանգատներ հավաքագրելու նպատակով։

25. Համայնքին տրվող պետական բնապահպանական սուբվենցիաների գումարները ուղղել բացարձակապես հանքարդյունաբերական ազդեցությամբ առաջացած բնապահպանական և առողջապահական խնդիրների լուծման, դրանց հետևանքների վերացման և ռիսկերի կանխարգելման ուղղությամբ։

26. Վերանայել հանքարդյունաբերության հետևանքով փաստացի տուժող բնակավայրերի ցանկերը և դիմել ՀՀ Կառավարություն՝ հանքարդյունաբերությունից տուժող, սակայն ազդակիր բնակավայրի կարգավիճակ չունեցող բնակավայրերը ազդակիր ճանաչելու առաջարկությամբ։

27. Ոլորտային փորձագետների ներգրավմամբ ֆինանսապես հաշվարկել հանքարդյունաբերության բացասական ազդեցությունից համայնքին պատճառված սոցիալական, բնապահպանական և առողջապահական վնասները։ Արդյունքները ներկայացնել ՀՀ Կառավարություն։

28. Իրականացնել համայնքի ղեկավարի և ավագանու կողմից շրջակա միջավայրի աղտոտման արդյունքում տուժած քաղաքացիների բողոքները և գանգատները լսելու և դրանց ընթացք տալու համար ընդունելություն՝ սահմանելով դրա համար ամիսը առնվազն երկու օր։